Փաթեթավորում

«Փաթեթավորումը» «նյութ» է, որն օգտագործվում է ապրանքները փաթեթավորելու կամ պաշտպանելու համար: Փաթեթավորումը՝ որպես միջոց/տեխնոլոգիա, օգտագործվում է ապրանքները տարածելու, պահեստավորելու, վաճառելու և օգտագործելու ընթացքում փակելու կամ պաշտպանելու նպատակով: Դրա կիրառելիությանը կարելի է հանդիպել տարբեր ոլորտներում, այդ թվում, օրինակ՝ տիեզերական, խմիչքների, քիմիական նյութերի, հիվանդանոցների, դեղագործության, սննդի և այլն:

Այն օգտագործվում է նաև որպես տեղեկատվության տրամադրման միջոց սպառողների համար (փաթեթավորման պարունակությունը, բաղադրիչները, քանակը, արտադրության և պիտանելիության ժամկետը, արտադրանքի արժեքը և այլն): Փաթեթավորումը լինում է տարբեր ձևերի, տարբեր չափսերի և պատրաստման համար օգտագործվում են տարբեր տեսակի նյութեր՝ կախված պահպանվող իրից կամ ապրանքից:

Փաթեթավորումն ունի ստորև նշված մի շարք առավելությունները՝

- պաշտպանիչ պատնեշ՝ փաթեթավորման նյութը ծառայում է որպես փակոց և պաշտպանում արտադրանքն այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ ջուրը, փոշին և այլ աղտոտիչները,
- ֆիզիկական պաշտպանությունը պաշտպանում է փաթեթավորված արտադրանքը ընկնելուց, հարվածներից, բարձր ջերմաստիճանից, ցնցումներից և այլն,
- հարմարավետություն՝ տարածման, մշակման, կուտակման, բացման և փակման, վերօգտագործման, վերամշակման և այլնի պարագայում,
- անվտանգություն՝ բարձրացնում է անվտանգությունը կեղծման, գողության և այլնի առումով,
- կայունություն՝ վերամշակվող և բազմակի օգտագործման փաթեթավորումը կարող է օգտագործվել մի քանի անգամ վերամշակումից հետո:

Ըստ Եվրոպական վիճակագրական վարչության՝ Եվրոպայում 2015 թվականին մեկ բնակչի հաշվով առաջացել է 166,3 կգ փաթեթավորման թափոն (Խորվաթիայում՝ 51,2 կգ մեկ բնակչի և Գերմանիայում՝ 222,2 կգ մեկ բնակչի հաշվով): 2006-ից 2015 թվականներին թուղթն ու ստվարաթուղթը եղել են փաթեթավորման հիմնական թափոնները ԵՄ-ում (34,8 միլիոն տոննա 2015 թվականին), որին հաջորդում են պլաստիկն ու ապակին (համապատասխանաբար՝ 15,9 և 15,8 միլիոն տոննա):

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի տվյալներով՝ մեկանգամյա օգտագործման փաթեթավորումը բնապահպանական ամենալուրջ խնդիրներից մեկն է: Պլաստիկ փաթեթավորումը հիմնականում մեկանգամյա օգտագործման է, հատկապես սպառողական ապրանքների արտադրության մեջ, և դրա մեծ մասը դեն է նետվում արտադրման նույն թվականին: 2015 թվականին աշխարհում արտադրված պլաստիկ թափոնների գրեթե 50%-ը բաժին է հասել պլաստիկ փաթեթավորմանը: Այս փաթեթավորման մեծ մասը՝ ներառյալ պոլիստիրոլ և այլ պլաստիկներ, արագ չեն քայքայվում և, աղբավայրերում հայտնվելով, առաջացնում են բնապահպանական շարունակական խնդիրներ: Փաթեթավորման արտադրության մեջ օգտագործվում են բնական ռեսուրսներ՝ ներառյալ ջուրը և էլեկտրաէներգիան, որոնք իրենց հերթին էլ առաջացնում են առանձին բնապահպանական խնդիրներ:

Պլաստիկ փաթեթավորման թափոնների առաջացում, 2014թ. (մլն տոննա)



Աղբյուր՝ ՄԱԿ շրջակա միջավայրի մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի կայունություն